Հավելված N 2
2026 թվականի հունվարի «23»-ին կնքված
«1032-11002/2026-ՀԿԱՏ8» պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| **Միջոցառման անվանում** | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» (Արտաշատ) |
| **Դրամաշնորհի N** | «1032-11002/2026-ՀԿԱՏ8» |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ ԱՍՀՆ |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ |
| **Միջոցառման իրականացման ժամանակահատված** | 01.01.2026 - 31.12.2026 |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01,04,26-30,06,26 |
| **Ներկայացման օր** | 09.07.2026 |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Տիգրանուհի Տարախչյան, ծրագրի ղեկավար |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

| |
|---|
| **Ծրագրով նախատեսված և հաշվետու ժամանակաշրջանին համապատասխանող հիմնական գործողություններն են՝** <br><br> 1) Խնամքի ծառայություններ հայցող շահառուի անհատական գնահատված կարիքներին համարժեք ծառայությունների մատուցում: <br><br> 2) Խնամքի ծառայությունների տրամադրում շահառուի հետ կնքված պայմանագրին, ծառայությունների մատուցման ժամանակացույցին և անհատական սոցիալական ծրագրին համապատասխան, մասնավորապես՝ <br><br> ✓ Կենցաղային սպասարկում <br><br> ✓ Բժշկական օգնություն և սպասարկում <br><br> ✓ Սոցիալ-հոգեբանական օգնություն: Միջոցառումների կազմակերպում՝ շահառուների հասարակական կյանքը ակտիվացնելու նպատակով <br><br> ✓ Խորհրդատվական օգնություն: Սոցիալական աշխատողի կողմից շահառուներին սոցիալական խորհրդատվություն/շահերի պաշտպանություն, միջնորդում, ուղղորդում այլ կառույցներ և այլն/ տրամադրում: <br><br> 3) Սննդի, հիգիենիկ պարագաների և դեղորայքի տրամադրում: <br><br> 4) Ծրագրի տեսանելիության ապահովում՝ տեսանյութերի, ծրագրում ընդգրկված շահառուների կյանքի պատմությունների, ինֆոգրաֆիկաների, լուսանկարների և տեսանելիությունն ապահովող այլ նյութերի միջոցով ծրագրի տեսանելիության ապահովում: |

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

| |
|---|
| Հաշվետու ժամանակահատվածում ծառայություններ են մատուցվել 25 շահառուի՝ համաձայն հաստատված աշխատանքային պլանի: <br><br> Իրականացվել է շահառուների կարիքների գնահատում՝ կիրառելով համապատասխան ձևաթղթեր, որոնց հիման վրա կազմվել են անհատական սոցիալական ծրագրեր և կնքվել ծառայությունների մատուցման պայմանագրեր: <br> **Սոցիալական աշխատողը** յուրաքանչյուր շահառուի այցելել է ամսական երկու անգամ: <br><br> Ծրագրում ընդգրկված բոլոր 25 շահառուները ստացել են սոցիալական խնամքի ծառայություններ՝ յուրաքանչյուրի համար սահմանված շաբաթական գրաֆիկի համաձայն: Պլանային այցելություններից բացի, ըստ անհրաժեշտության տրամադրվել են նաև լրացուցիչ ծառայություններ: <br><br> **Սոցիալական խնամողների** կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ |

- ✓ բնակարանի մաքրում և կարգավորում,
- ✓ անկողնային պարագաների և հագուստի փոխում,
- ✓ գնումների իրականացում,
- ✓ կոմունալ վճարումների կատարում,
- ✓ սպասքի լվացում,
- ✓ լվացքի կազմակերպում,
- ✓ լոգանքի և լվացման ապահովում,
- ✓ մարմնի մասնակի խնամք (ներառյալ եղունգների խնամք),
- ✓ սննդի պատրաստում և կերակրում,
- ✓ միջնորդական ծառայությունների տրամադրում այլ հաստատությունների հետ և այլն:

Բոլոր 25 շահառուներն ապահովվել են կենցաղային սպասարկման և հիգիենայի պահպանման ծառայություններով՝ ըստ իրենց կարիքների: Լվացքի, լոգանքի և բնակարանի մաքրության կազմակերպման արդյունքում բարելավվել է շահառուների հիգիենիկ վիճակը: Գնումների իրականացումը հնարավորություն է տվել նրանց ապահովվել անհրաժեշտ ապրանքներով, իսկ կոմունալ վճարումների կատարումը նպաստել է նրանց ապահովության և կայունության զգացմանը:

Կատարված աշխատանքների հաշվառումն իրականացվել է ծառայությունների մատուցման ստուգաթերթերի միջոցով, ինչպես նաև հաստատվել է շահառուների ստորագրությամբ՝ նրանց մոտ պահպանվող ամսական ընթացիկ ծառայությունների տնային թերթիկներում:

Բուժքրոջ կողմից կազմակերպվել և տրամադրվել է շարունակական բժշկական աջակցություն՝ ուղղված շահառուների առողջության պահպանմանն ու բարելավմանը: Արդյունքում ապահովվել է շահառուների առողջական վիճակի կայունացում և որոշ դեպքերում՝ բարելավում:
Բուժքույրը առողջապահական ծառայություններ է մատուցել ծրագրում ընդգրկված բոլոր 25 շահառուներին՝ իրականացնելով պարբերական տնայցեր՝ համաձայն սահմանված շաբաթական գրաֆիկի: Տնային այցելությունների ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- ✓ շահառուների առողջական վիճակի մշտադիտարկում,
- ✓ դեղորայքի ընդունման վերահսկում,
- ✓ արյան ճնշման չափում,
- ✓ արյան մեջ շաքարի մակարդակի որոշում,
- ✓ զարկերակային հաշվարկ և ջերմաչափում,
- ✓ միջմկանային ներարկումներ,
- ✓ վիրակապում,
- ✓ խորհրդատվության տրամադրում և այլ անհրաժեշտ միջամտություններ:

Միաժամանակ կազմակերպվել են ուղեկցում ամբուլատոր և պոլիկլինիկական ծառայություններ՝ պլանային այցելությունների շրջանակում՝ սերտ համագործակցությամբ ընտանեկան բժիշկների հետ: Իրականացվել է նաև 9 հավելյալ այց՝ առողջական լրացուցիչ խնդիրների կարգավորման նպատակով: Բացի այդ, 3 շահառու բուժքրոջ ուղեկցությամբ տեղափոխվել է բուժհաստատություն՝ հետազոտություններ անցնելու նպատակով:

**Ապրիլ ամսվա ցուցանիշներ՝**

- ✓ Արյան ճնշման չափում՝ 25 շահառու
- ✓ Արյան մեջ շաքարի չափում՝ 9 շահառու
- ✓ Ջարկերակային հաշվարկ, ջերմաչափում և վերահսկում՝ 25 շահառու
- ✓ Դեղորայքի ընդունման վերահսկում՝ 17 շահառու
- ✓ Մշտական կապ պոլիկլինիկաների և ընտանեկան բժիշկների հետ՝ 21 շահառու
- ✓ Միջնորդական ծառայություններ՝ 8 շահառու
- ✓ Մշտադիտարկում՝ 25 շահառու
- ✓ Բժշկական քարտերի ստացման գործընթացում ներգրավվածություն՝ 7 դեպք

**Մայիս ամսվա ցուցանիշներ՝**

- ✓ Արյան ճնշման չափում՝ 25 շահառու
- ✓ Արյան մեջ շաքարի չափում՝ 6 շահառու
- ✓ Ջարկերակային հաշվարկ, ջերմաչափում և վերահսկում՝ 25 շահառու
- ✓ Դեղորայքի ընդունման վերահսկում՝ 16 շահառու
- ✓ Մշտական կապ պոլիկլինիկաների և ընտանեկան բժիշկների հետ՝ 14 շահառու
- ✓ Միջնորդական ծառայություններ՝ 6 շահառու
- ✓ Մշտադիտարկում՝ 25 շահառու
- ✓ Բժշկական քարտերի ստացման գործընթացում ներգրավվածություն՝ 3 դեպք

**Հունիս ամսվա ցուցանիշներ՝**

- ✓ Արյան ճնշման չափում՝ 25 շահառու
- ✓ Արյան մեջ շաքարի չափում՝ 8 շահառու
- ✓ Ջարկերակային հաշվարկ, ջերմաչափում և վերահսկում՝ 25 շահառու
- ✓ Դեղորայքի ընդունման վերահսկում՝ 18 շահառու
- ✓ Դեղորայքի տրամադրում- 24 շահառու
- ✓ Մշտական կապ պոլիկլինիկաների և ընտանեկան բժիշկների հետ՝ 15 շահառու
- ✓ Միջնորդական ծառայություններ՝ 6 շահառու
- ✓ Մշտադիտարկում՝ 25 շահառու
- ✓ Բժշկական քարտերի ստացման գործընթացում ներգրավվածություն՝ 7 դեպք

Բուժքրոջ կողմից իրականացված բոլոր այցերն ու մատուցված ծառայությունները պատշաճ կերպով գրանցվել են համապատասխան ստուգաթերթերում, ինչպես նաև հաստատվել են շահառուների բնակարաններում պահպանվող ծառայությունների մատուցման տնային թերթիկներում:
Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատողի կողմից իրականացվել են շահառուներին պարբերական այցելություններ: Կատարվել է համալիր աշխատանք, որը ներառել է շահառուների կարիքների գնահատում, անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, փաստաթղթերի ձևավորում, ինչպես նաև սոցիալական ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքում:
Շահառուներին տրամադրվել է շարունակական սոցիալական խորհրդատվություն և տեղեկատվություն՝ ուղղված նրանց իրավունքների և շահերի պաշտպանության մակարդակի բարձրացմանը: Քննարկվել են նրանց հուզող խնդիրները, առաջարկվել են հնարավոր լուծումներ և աջակցության տարբեր մեխանիզմներ, ինչը նպաստել է շահառուների իրազեկվածության և տեղեկացվածության աճին:

Բոլոր այցերի վերաբերյալ գրառումները կատարվել են ծառայությունների մատուցման ստուգաթերթերում, ինչպես նաև շահառուների բնակարաններում պահպանվող տնային թերթիկներում:
Սոցիալական աշխատողը համագործակցել է համապատասխան կառույցների հետ՝ աջակցելով տարեցների կենսաթոշակների և նպաստների քարտային եղանակով ստացման գործընթացի կազմակերպմանը:
*Շահառուների սոցիալական խնդիրները լուծվել են համակարգված մոտեցմամբ՝ ծառայությունների մատուցման, խորհրդատվության, միջնորդական աջակցության և անհրաժեշտության դեպքում անմիջական օգնության տրամադրման միջոցով: Արդյունքում շահառուները դարձել են ավելի տեղեկացված և ինքնուրույն, ինչպես նաև ավելի պատրաստակամ՝ պաշտպանելու իրենց իրավունքներն ու շահերը և ակտիվորեն մասնակցելու սեփական խնդիրների լուծման գործընթացին:*

Ծրագրում ընդգրկված բոլոր շահառուներին տրամադրվել են լվացքի ծառայություններ՝ նպաստելով նրանց կենցաղային պայմանների էական բարելավմանը:
Հաշվետու ժամանակահատվածում ամսական մեկ անգամ 24 շահառուի լվացքը տեղափոխվել է գրասենյակ, որտեղ կազմակերպվել են լվացման, արդուկման և հետվերադարձի գործընթացները: Մյուս 1 շահառուի դեպքում լվացքի իրականացումը կատարվել է նրա բնակարաններում՝ սոցիալական խնամողների աջակցությամբ:

5-6 շահառուի համար յուրաքանչյուր ամիս իրականցվել է հագուստի հավելյալ լվացում, արդուկում և հետվերադարձ շահառուին:

Լվացքի և լոգանքի ծառայությունների համակարգված և շարունակական կազմակերպման շնորհիվ զգալիորեն բարելավվել է շահառուների հիգիենիկ վիճակը, ինչպես նաև բարձրացել է նրանց ընդհանուր բարեկեցությունն ու կյանքի որակը:

Շահառուներին տրամադրվել է առաջին անհրաժեշտության դեղորայք: Դեղորայքի տրամադրումն իրականացվել է բացառապես բժշկի նշանակմամբ՝ ապահովելով բուժման գործընթացի անվտանգությունն ու արդյունավետությունը: Բացի այդ, բուժքույրը լիազորված է եղել շահառուների փոխարեն պոլիկլինիկաներից ստանալ նրանց հասանելի դեղամիջոցները՝ նպաստելով ծառայությունների հասանելիության բարձրացմանը:

Ծրագրում ընդգրկված բոլոր 25 շահառուներին յուրաքանչյոր ամիս տրամադրվել են սննդի փաթեթներ և հիգիենիկ պարագաներ: Սննդի փաթեթները կազմվել են՝ ներառելով անհրաժեշտ կալորիականությամբ և սննդարար արժեք ունեցող մթերքներ՝ ուղղված շահառուների առողջության պահպանմանը: Սննդի և հիգիենիկ պարագաների բաշխումն իրականացվել է կամավորների և սոցիալական խնամողների համատեղ աշխատանքի շնորհիվ՝ ապահովելով գործընթացի արդյունավետ և կազմակերպված իրականացումը:

*Ծրագրային թիմի կողմից շահառուի համար արժանապատիվ խնամք և սպասարկում կազմակերպելու արդյունքում նրանց կյանքի որակը բարելավված է: Շահառուները հիմնականում ունեն կայուն առողջական վիճակ, բժշկական ծառայությունների հասանելություն, անհրաժեշտ սոցիալական խորհրդատվության, անհրաժեշտ դեղորայքի, սննդի և հիգիենիկ պարագաների հասանելիություն: Շահառուները միայնակ չեն, համարձակ են և ինքնավստահ:*

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

| |
|---|
| Բոլոր այցերի, միջոցառումների, իրականացված աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ թղթաբանությունը և նկարները հավաքվում և պահպանվում են գրասենյակում: <br> 18.06.2026թ. կազմակերպվել է ուխտագնացություն/էքսկուրսիա դեպի Գառնի /Գեղարդ: |

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

| |
|---|
| Հաշվետու ժամանակահատվածում էական խնդիրներ կամ խոչընդոտներ չեն գրանցվել: |

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

| |
|---|
| Հաջորդ եռամսյակում պլանավորվում է շարունակել ծրագրով նախատեսված բոլոր գործողությունները՝ <br> Կարիքների վերագնահատում, փոփոխությունների գրանցում անհատական սոցիալական ծրագրերում, խնամքի ծառայությունների տրամադրում, մասնավորապես՝ <br> ✓ կենցաղային սպասարկում <br> ✓ բժշկական օգնություն և սպասարկում <br> ✓ սոցիալ-հոգեբանական օգնություն <br> ✓ խորհրդատվություն <br> Սննդի, հիգիենիկ պարագաների և առաջին օգնության դեղորայքի տրամադրում: <br> Ծրագրի տեսանելիության ապահովում |

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Հայկական Կարիտաս ԲՀԿ |
| Ք. Երևան, կառավարական տուն 3 | Ք. Գյումրի, փ. Հ. Սարգսյան, նրբ. 3, տ. 8 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | ՀՎՀՀ - 05514397 |
| ՀՎՀՀ -01506515 | Նախագահ՝ Ճորճ Միշելի Տնկայէ |
| Գլխավոր քարտուղար՝ | Գևորգ Արք. Նորատունկեան |
| --------------------------------------------- | ---------------------------------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հայկական Կարիտաս» կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ/Արտաշատ/

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | **Շահառուների թվաքանակը հաշվետու ժամանակահատվածի սկզբում/վերջում** | 25/25 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 22/22 |
| 2. | **Հաշմանդամություն ունեցող անձանց թվաքանակը** | 15 |
| 2.1 | այդ թվում՝ կին | 13 |
| 2.2. | այդ թվում 18-65տարեկան | 1 |
| 2.2.1 | այդ թվում՝կին | 1 |
| 2.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 2.2.3 | 40-65 տարեկան | 1 |
| 2.3 | 65 տարեկանից բարձր | 14 |
| 3. | **Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ)** | Ա –3<br>Բ – 22 |
| 4. | **Կենցաղային սպասարկում.** | 25 |
| 5. | **Բժշկական օգնություն և սպասարկում.** | 25 |
| 6. | **Սոցիալ-հոգեբանական օգնություն** | 25 |
| 6.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 2 |
| 6. | **Խորհրդատվական օգնություն** | 25 |
| 7. | **այլ ծառայություններ (*նշել*)**<br>լվացքի ծառայություն<br>սննդի տրամադրում | 24 շահառուի հագուստների լվացումը իրականացվել է Կարիտասի լվացքատանը, մեկինը՝ իր տանը<br>3 անգամ 25 շահառուի |

| | | |
|---|---|---|
| | հիգիենիկ միջոցների տրամադրում<br><br>դեղորայքի տրամադրում | 3 անգամ 25 շահառուի<br><br>3 անգամ 25 շահառուի |